

նի բշտիկները Մայրերը շատ անգամ այդ քանից մեծ վախ են զգում թէ՛ մի՞ գուցէ իսկական վտանգաւոր ծաղիկ պատուաստեցին խեղճ երեխային։ Սակայն հարկ՝ չկայ վախենալու։ Երովհետե կովի ծաղիկ պատուաստեց մարդկային իսկական ծաղիկ չի դուրս տայ մարմնի միւս մասերում։ այլ նոյն կովի ծաղիկը կլինի որ յամենայն դէպս անվնաս է։

Մայրը շուտով ինքն էլ համոզուած է, որ մարմնի վրայ դուրս տուածից ոչինչ վտանգ չաւելացաւ երեխային։ փոքրի վրայի բշտիկները շատ շուտով չորանում են և աւելի շուտ անհետանում։ քան թե ի սկզբնական բշտիկը։ Ուրեմն առ հասարակ՝ կովի ծաղիկի կանոնաւոր պատուաստումից քնաս չկայ *։

Թարգմ. Բժօկապետ Ս. Բարայանց.



ՄԱՆՐԱԼՈՒՐԳ

3000 հազարամեօր մի ժամում կամ մի հազարամեօր մի վայրկեանում.— Այսպիսի աներեւակայելի արագութեան միջոց ձեռք բերել գուցէ անհասկնալի կհամարուէր տարիներ առաջ, թէկուզ հէնց տարեցտարի կատարելագործուող թնդանօթածգութեան արհեստի մէջ, սակայն կասկածանքի տեղիք չի մնում՝ այդքան տարածութիւն համարեալ թէ թռչում են այժմեան թնդանօթների ուռմբերը և ամենայն հաւանականութեամբ, մօտիկ ապագայում, դեռ դրանից կանցնեն էլ. Քրանսիական նորագոյն շէնքերի թնդանօթների ուռմբերի արագութիւնն արդէն մի վայրկեանում 900 մետրից անցնում է, իսկ անընդհատ բարենորոգումներն այդ հրանօթների արուեստական կազմութիւնն այն նրբութեան կհասցնեն, որ մի վայրկեանում ուռմբը կարող կլինի 1000 մետր տեղ անցնել, Այժմեան ուռմբերի միջոցով, եթէ իսկապէս հնարաւոր լինէր, կարելի կլինէր նրանց մէջ դրուած նամակներն իննը կամ տասը վայրկեանում 8 հազար մետր տեղ հասցնել։ Մինչև այժմ ձեռք բերուած կատարելագործութեանց համառօտ ակնարկը, ինչպէս նկատուած է Journal des Débats թերթի մէջ գիտնական հարցերի ուսումնասիրութեամբ զբաղուող նշանաւոր անձնաւորութիւններից մէկը,

* Ով կամենայ աւելի մանրամասն ծանօթանալ ծաղկահաստութեան գործին և ջէնների գիւտի պատմութեանը, թող կարգա հայերէն՝ 1) Դոկտոր Ֆէշիմայնեանի օգտաւէտ երկը՝ ՊԱՏՈՒԱՍՏԵՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Պօլիս հրատ. 1884 թ. 2) Տիկին Տրուսիյի Կոստանկանի (տիկին Մարգարիտ) «Ջեմնէր» վերնագրով ժողովրդական զբոյրիկը։ Ծան. Թարգմ.

միջոց է աւելիս բոտ սրժանւոյն գնահատելու այն յառաջդիմական քայլերը, որոնց աստիճանաբար հասել են հրանօթ ղէներերի անխոնջ մշակները։ Այս դարի սկզբներից սկսած այդ արագութեան աստիճանը կրկնապատկուել է, եթէ այժմեան արագութիւնը ուռմբերը նախկինների հետ համեմատելու լինենք, կտեսնենք, որ նրանք երկու անգամ արագ են թռչում. Կրուպկի 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները յիսուն կիլոգրամմանոց կամ 125 գրուանքանոց ուռմբերը մի վայրկեանում 304 մետր տեղ են ձգում, նոյն այդ գործարանատիրոջ 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները 108 կիլոգր. կամ 260 գրուանքանոց ծանրութեան ուռմբերը դեռ աւելի մեծ արագութեամբ են ձգում, այսինքն 860 մետր տեղ, իսկ 24 հ. մետրի թնդանօթները էլի նոյն արագութեամբ 160 կիլոգր. կամ 420 գրուանքանոց ուռմբերը, Շնէյդէր Կանէյն 15 հար. մետրի թնդանօթները մի վայրկեանում 40 կիլոգր. կամ 100 գրուանքանոց ուռմբերն սկզբնական արագութեամբ 800, 840 և 900 մետր տեղ են ձգում, իսկ Ամերիկայի նաւատորմին ունի այնպիսի թնդանօթներ, որոնց ուռմբերը 915 մետր տեղ են ձգում, ուրիշ խօսքով մի վայրկեանում մօտաւորապէս մի հազարամետր։ Աերոյիշխաններից պարզ երևում է, որ մարդկանց ներկայումս այս կամ այն մարմնին տուած արագութեան աստիճանն անցնում է երկրիս իւր առանցքի շուրջը կատարած պտոյտի արագութիւնից, որը, ինչպէս յայտնի է, Հասարակածի մօտ հասնում է 485 մետրի մի վայրկեանում։

* * *

Օձորս։— Աերջին ժամանակներս Բենարէսի շրջակայքում տեղի է ունեցել մի այն աստիճանի սարսափելի անցք, որը նոյն իսկ Հնդկաստանի նման մի երկրում, ուր այդպիսի դէպքեր շատ յաճախ են կրկնուում, ցնցող տպաւորութիւն է թողել, Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ հրաշալիքների այդ աշխարհում օձերի խայթելուց աւելի շատ մարդիկ են կորչում, քան գիշատիչ գաղանդներ ծանկերից, Հնդկաստանցիներն օձերից աւելի են վախենում քան վաղորներից և կամ ինձերից՝ ուստի և անխնայ կտորուում են, կանոնաւոր կռիւ մղելով նրանց դէմ։ Թունաւոր օձերից ամենից աւելի յայտնին այսպէս կոչուած իտոմայի օձն է, որի խայթը նոյնքան մահաւոր թէ, որքան և Ամերիկայի Մարտինիկայի, Տէյլլինի, Եգիպտոսի և Կապանդիայի իժերինը, Այս օձի կծածն անբուժելի է և անխուսափելի մահ՝ նրա հետեանքը։ Օձորսների պարապմունքը մեծ շահ է բերում իրենց, բայց և անչափ վտանգաւոր է։ Դժուարութիւնը, ի հարկէ, այն չէ, որ տեղն ու

տեղն սպանեն այդ սողուններին և անգղիական վարչութիւնից նշանակուած առատ վարձատրութիւնն ստանալ կարողանան, այլ այն սր շատ անգամ հարկն ստիպում է ողջ բռնել նրանց օձ պարտողներին, գիտնական հաստատութիւններին, ժողովածուների և կամ կենդանարանական այգիների համար: Անցեալ ամառուայ երեկոներին մէկն էր, երբ ամբողջ Բենարէսին քաջ ծանօթ օձորս Ագալին որսորդութիւնից տուն վերադարձաւ հարուստ աւարով, որ բազկացած էր մի քանի տասնեակ կենդանի օձերից: Այս շնչաւոր կողոպուտն ետում զեռում էր հաստ կաշուէ տոպրակի մէջ, որ կարուած էր զոմշի երկտակ կաշուց: Ըստ իր սովորութեան, Ագալին ամենամեծ զոռչութեամբ դատարկեց օձերն մի մեծ կիսատակառի մէջ, որն իր սենեակի մի անկիւնումն էր գրուած: Արգէն շատ ուշ էր, և յոգնած որսորդը, որ բոլորովին միայնակ էր պարում անկողին մտաւ, վերմակը վրան քաշեց և ըստ շանցած քնեց: Թշուառականը մոռացել էր ինչ ամենից կարեւորն էր, չէր փակել տակառի բերանը: Լուսադէմին Ագալին մի անբացատրելի սառն զգացումից՝ զարթնում է, բաց աւնում աչքերը և սարսափով տեսնում, որ բոլորովին ծածկուած է օձերով: Երանք անկողնու տարբութիւնից գրաւուած, այդտեղ էին հաւաքուել Բուական էր մի թիթեւ շարժում, թողլ հառաչանք և կամ հազիւ լսելի մի ծիչ, և անխուսափելի մահճը վրայ կհասներ: Ագալին այդ շատ լաւ գիտէր և չի շարժուում: Օձերը սողում են նրա մարմնի վրայով, փաթաթուում են ձեռներովն ու ոտներովը, լիզում են իրենց պաղ լեզուներովը նրա ականջներն ու շրթունքները, սակայն նա մնում է անշարժ, ինչպէս քար, ոչ միայն երկի դից, թէ կարող են կենել, այլ և մի դիւթիչ ազդեցութիւնից: Վերջապէս հասաւ ցանկալի առաւօտը և ծագեց փայլուն առեւ, Ագալին գիտէր, որ շուտով իր մօտն է գալու հարեան տանտիկները, որը և նրա տնտեսն էր: Այդ պատճառով անհամբեր սպասում էր նրան ինչպէս փրկիչ հրեշտակի, և յոյս ուներ, թէ նա անշուշտ կարող կլինի ազատել նրան մահուանից: Նրա միակ յոյսը նա էր, սակայն նա էլ ով գիտէ երբ է գալու: Բայց ահա և նա: Օձերը նրան տեսան, թէ չէ, բարձրացրին իրենց գլուխները, Շատ պարզ է, նրանք զգոհ մնացին, որ եկել են և նրանց խաղաղութիւնը վրդովել են ուզում: Աստուղած, իրար են անցնում շշուում ու սուլում և աւելի ու աւելի դուրս հանում իրենց երկձիղի լեզուները: Հնգկուհին խորհրդաւոր կերպով մատը շրթունքներին է տանում, ուղեւաղով հասկացնել, թէ իմացաւ բանն ինչու՞մն է և թէ ինչ պէտք է անէ նրան ազատելու համար: Մի քանի րոպէից նա կրկին ներս է մտնում, ձեռքին կաթով լի բըր մի մեծ կովկիթ, նա շտապով կաթի ամանը սե-

նեակի մէջ տեղն է դնում և մի երկու օստիւնով դուրս թռչում՝ չէմքից, Իսկ օձերը, իրենց խիստ սիրած խմելիքի հոտից հրապուրուած, մէկը միւսի ետեւից թողնում են թշուառ որսորդի մարմնը, որը վերջապէս զգում է, թէ կարող է ապաստուել քաշել, նրա անդամներն այլևս ճնշում չեն զգում և այն սառը զգացումը, որ բոլորովին ընդարմացրել էր նրան, հետզհետէ պակասում է, և ապաքս Ագալին շուտով կազատուի իր անխիղճ դահճանքից: Սակայն նրա մարմնու վրայ դեռ մի հինգ վեց հատ մնում են: Մի կարծ միջոցից յետոյ, որ տարիներ էին թուում, մնացին չորսը, երեքը, երկուսը, Վերջապէս մնաց մէկը, որը կարծես, միտք չունի բաժանուելու, նրա ձախ ձեռքից, որի վրայ, իր ամբողջ մարմնով պինդ փաթաթուել էր: Զարհուրելի տանջանք, Ինչեր չքաշեց նա, մինչև վերջ ի վերջոյ, այդ մէկն էլ կաթի ամանի կողմն ուղղուեց:

Ասում են, որ մինչև անգամ այս քստմեկի պատահարից յետոյ էլ, Ագալին շարունակում է իր վտանգաւոր պարապմունքը, չի դադարում օձեր որսալուց:

* * *

Ամեն խմբային.— Տեքստում հրատարակուող «Times Review» թերթը խմբագրւում է մի ծարար ու ծարպիկ մարդու ձեռքով, որը մարմնի հէնց այդ կարեւոր անգամից բոլորովին գուրկ է. նա թէ գրում և թէ ամէն աշխատանք կատարում է իր ոտների մատներով: Այդ պարուն անձնուն էլ ծրնուել է սրանից 30 տարի առաջ. սակայն մեծ ընդունակութեանց տէր լինելով և միևնոյն ժամանակ չափազանց փառասեր, որոշում է, չնայելով իր մարմնի այլանդակ կազմութեան, աշխարհում աչքի ընկնող զիրք ձեռք բերել, նրա ծնողներն այնքան աղքատ էին, որ նրա այդ փառասիրական ձգտումներին որևէ կերպով բաւականութիւն տալ չէին կարող: Բայց հաստատակամ երիտասարդը չվհատուեցաւ. շնորհիւ իր մտաւոր կարողութեանց և տոկուն աշխատասիրութեան, այս հաշմանդամ հերոսը կարողացաւ հասնել իր ցանկալի նպատակին:

Միջնակարգ դպրոցի դասընթացն աւարտելուց յետոյ, նա համալսարան մտաւ և իր համար մասնագիտութիւն ընտրեց իրաւագիտութիւնը: Այդ տեղ էլ յաջողութեամբ վերջնական քննութիւն տալով, ասպարէզ մտաւ և հինգ տարի երգուեալ հաւատարմատարի պաշտօն էր վարում ամենայն բարեխղճութեամբ: Եւ վերջապէս գնեց «Times Review» թերթը, որն այդ միջոցում շատ անշան թուով բաժանորդներ ուներ: Նրա խմբագրութեամբ այդ թերթը շատ շուտով ոչ միայն բաղմամբիւ բաժանորդներ ձեռք բերեց, այլ նաև դարձաւ Տեքստի ամենայայտնի ու ազդեցեկ թերթերից մէկը:

Պէտք է ասել, որ նա մանկութիւնից սկսած ջանք էր թափում ձեռքերի անկիւք գործը ոտների մատներով կատարել և նոյն իսկ իր ընկերներին հետ խաղալիս հազար ու մի հնարք էր փնտռում խաղը տանելու և կամ թէ չէ, նրանցից ոչ մի բանում յետ չմնալու: